ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.7-րդ հոդվածում «տասնապատիկից» բառը փոխարինել «հիսնապատիկից» բառով, «հիսնապատիկի» բառը փոխարինել «հարյուրապատիկի» բառով, «հիսնապատիկից» բառը փոխարինել «հարյուրհիսնապատիկից» բառով եւ «հարյուրապատիկի» բառը փոխարինել «երկուհարյուրապատիկի» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 189.7-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր մասով. «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրամադրելու՝ օրենքով նախատեսված ժամկետները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

1.1. «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ եւ 11-րդ հոդվածներն ի թիվս այլնի սահմանում են տեղեկություն տնօրինողի կողմից իրեն հասցեագրված գրավոր հարցմանը պատասխանելու ժամկետները: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի հոդվածի 7-րդ եւ 10-րդ մասերի համաձայն՝ «7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում. 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում. 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում. 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը: (...) 10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:»: Նույն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «3. Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը:»:

Միաժամանակ, մի կողմից տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրամադրելու՝ օրենքով նախատեսված ժամկետները խախտելու համար պատասխանատվություն նախատեսված չէ. այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում միայն օրենքով նախատեսված տեղեկությունն ապօրինաբար չտրամադրելու համար: Մյուս կողմից տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանելու պրակտիկան վկայում է, որ շարունակում է արդիական մնալ տեղեկություն ստանալու հարցումներին օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ պատասխանելու խնդիրը:

Օրինակ, տեղեկատվության ազատության ոլորտում գործունեություն իրականացնող «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից վարվող givmeinfo.am կայքում տեղադրված հարցումների եւ դրանց պատասխանների վիճակագրության համաձայն՝ 2009-2021 թվականների ընթացքում տեղեկություն տնօրինողներից ստացված միայն լիարժեք պատասխանների հաշվարկով տեղեկություն ստանալու հարցումների 19%-ին պատասխան տրամադրվել է օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ: Վերջին տարիներին տեղեկություն ստանալու հարցումներին օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ տրամադրվող պատասխանների քանակը կրճատվել է, սակայն շարունակում է մնալ տեղեկատվության ազատության ոլորտի հիմնական խնդիրներից մեկը: Այսպես, givmeinfo.am կայքում տեղադրված հարցումների եւ դրանց պատասխանների վիճակագրության համաձայն՝ 2019 թվականից մինչ օրս ընկած ժամանակահատվածում տեղեկություն տնօրինողներից ստացված լիարժեք պատասխանների հաշվարկով տեղեկություն ստանալու հարցումների 10%-ին պատասխան տրամադրվել է օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ, իսկ որեւէ պատասխան (ներառյալ՝ մերժում) ստացած հարցումների 13.5%-ին տրամադրված պատասխանն է եղել օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ:

1.2. Տեղեկություն ստանալու իրավունքը, որպես մարդու այլ իրավունքների իրականացման նախապայման, ինչպես քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ լրագրողների (լրատվամիջոցների) կողմից, այնպես էլ անհատների կողմից հիմնականում կիրառվում է հանրայինշահի կամ անհատի իրավունքների պաշտպանության տեսանկյունից արժեքավոր տեղեկություններ ստանալու համար:

Միաժամանակ, Givmeinfo.am կայքում տեղադրված հարցումների եւ դրանց պատասխանների վիճակագրության համաձայն՝ 2019 թվականից մինչ օրս ընկած ժամանակահատվածում տեղեկություն տնօրինողներին հասցեագրված գրավոր հարցումների 18%-ի դեպքում տեղեկություն տնօրինողները օրենքի խախտմամբ ամբողջությամբ կամ մասնակիորեն չեն տրամադրում իրենցից պահանձված տեղեկությունները: Այսպես, նշված ժամանակահատվածում հարցումների 3%-ն առհասարակ որեւէ պատասխան չեն ստացել (լուռ մերժումներ), 9%-ի պատասխանները թերի են եղել, այսինքն հարցմամբ պահանջված որոշ տեղեկություններ չեն տրամադրվել, 3%-ի դեպքում ստացվել է անհիմն մերժում, այսինքն տեղեկությունը չի տրամադրվել, մերժվել է, սակայն օրենքի խախտմամբ՝ առանց օրենքով նախատեսված պատշաճ իրավական հիմքի, եւ եւս 3%-ի դեպքում ստացվել է անհիմն պատասխան, երբ ակնկալվող տեղեկությունան տրամադրումը թեեւ ձեւական իմաստով չի մերժվել, սակայն միեւնույն է պահանջված տեղեկությունը չի տրամադրվել կրկին օրենքի խախտմամբ՝ խուսափողական, ընդհանուր ձեւակերպումներով, պահանջված տեղեկությունների հետ կապ չունեցող

բովանդակությամբ կամ ոչ վերաբերելի հղումներով կամ օրենքով չնախատեսված այլ հիմնավորմամբ պատասխան գրություններով:

Վերոնշյալից բխում է, որ օրենքով նախատեսված տեղեկությունն ապօրինաբար չտրամադրելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված տուգանքի չափերը համադրելի չեն իրավախախտման հանրային վտանգավորությանը (տեղեկությունը չտրամադրելու արդյունքում հանրային շահին կամ անհատին հասցվող հնարավոր վնասին), ինչպես նաեւ բավարար չեն տեղեկություն տնօրինողներին օրենքով սահմանված տեղեկությունն ապօրինաբար չտրամադրելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու, այն է՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օերնսգրքի 22-րդ հոդվածով սահմանված վարչական տույժի նպատակներից մեկին (ինչպես իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարում կանխելու նպատակին) հասնելու համար:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է օրենքով նախատեսված տեղեկությունն ապօրինաբար չտրամադրելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված տուգանքի չափն ավելացնել՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով տուգանքը դարձնել հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով տուգանք, իսկ նույն խախտումը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կատարելու դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով տուգանքը դարձնել հարյուրհիսնապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափող տուգանք:

Նախագծով առաջարկվում է նաեւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածում լրացում կատարել, նախատեսել պատասխանատվություն տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրամադրելու՝ օրենքով նախատեսված ժամկետները խախտելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով տուգանք, իսկ նույն խախտումը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կատարելու դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով տուգանք:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք եւ նրանց դիրքորոշումը

Նախագիծը նախաձեռնվել են «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից եւ հանրագրով ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարությանը:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ կնախատեսվեն օրենքով նախատեսված տեղեկությունն ապօրինաբար չտրամադրելու իրավախախտման հանրային վտանգավորությանը (տեղեկությունը չտրամադրելու արդյունքում հանրային շահին կամ անհատին հասցվող հնարավոր վնասին) համադրելի տուգանքներ, ինչն իր հերթին կանխարգելիչ նշանակություն կունենա՝ ստիպելով տեղեկություն տնօրինողներին ձեռնպահ մնալ օրենքով նախատեսված տեղեկություններն ապօրինաբար չտրամադրելուց, այդ թվում՝ ստացված հարցումներն անտեսելուց, թերի կամ անհիմ պատասխաններ տրամադրելուց կամ տեղեկության տրամադրումն անհիմն մերժելուց:

Նախագծի ընդունմամբ նաեւ պատասխանատվություն կսահմանվի տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրամադրելու՝ օրենքով նախատեսված ժամկետները խախտելու համար, ինչը մի կողմից տեղեկություն ստանալու հարցմամբ տեղեկություն փնտրողին հնարավորություն կտա տեղեկատվության ազատության իրավունքի խախտման դեպքում պատշաճ իրականացնել իր այդ իրավունքի պաշտպանությունը, մյուս կողմից կանխարգելիչ նշանակություն կունենա՝ ստիպելով տեղեկություն տնօրինողներին պատշաճ պահպանել տեղեկություն ստանալու գրավոր հարցումներին պատասխանելու համար օրենքով սահմանված ժամկետները:

5. Նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը, ինչպես նաեւ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը եւ պետական բյուջեի եկամուտներում եւ ծախսերում սպասվելիք փոփոխությունները.

Նախագի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն, ինչպես նաեւ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն եւ պետական բյուջեի եկամուտներում եւ ծախսերում փոփոխությունների անհրաժեշտություն առկա չեն: